ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2021/39

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շշալցված խմելու ջրի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1301-2021 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 25.01.2021թ.-ի թիվ 02/25/01-2062 գրության հիման վրա, 03.02.2021թ.-ին «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 03.02.2021թ.-ին:

08.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/39 համարի ծածկագիրը:

12.02.2021թ.-ին և 05.03.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 12.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.03.2021թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 25.01.2021թ.-ի թիվ 02/25/01-2062 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի Ա Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, որի շրջանակներում ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո, պայմանագրի կողմերի միջև 07.02.2020թ. կնքվել է լրացուցիչ համաձայնագիր:

05.10.2020թ. Երևանի քաղաքապետարանը, աշխատակիցների բազմաթիվ դժգոհությունների պատճառով, Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից մատակարարված ջրից մեկ շիշ՝ փակ վիճակում, 18.9լ տարողությամբ ուղարկվել է փորձարկման՝ պարզելու ջրի որակական ցուցանիշները:

Ստացված առ 15.10.2020թ. փորձարկման N2080 եզրակացության համաձայն Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից մատակարարված ջուրը ՄԸԹ-ի անթույլատրելի քանակով, պսևդոմոնաս աէրոգինոզա, E.coli, էնտերոկոկկեր և աղիքային ցուպիկի մանրէների առկայությամբ չի համապատասխանում ՄՄ ՏԿ ԵԱՏՄ ՏԿ 044/2017-ով սահմանված նորմերին (փորձարկման արձանագրությունը կցվում է):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված».

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանի 05.11.2020թ. թիվ 06/22064 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի մատակարարվել նաև 0.5լ տարողությամբ շշալցված ջուրը, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի

քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1301-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/39 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի 2020թ.-ի ընթացքում, ընդ որում ձեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանվել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ըստ չափաբաժիններում նշված ժամկետները:

iii. Պատվիրատուն 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26106 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին վերաբերյալ տեղեկատվությունը և կից հիմքերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունենալու մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

iv. ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.01.2021թ.-ին թիվ 01.1/26-1/206-2021 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին և հայտնել է, որ 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26106 գրությամբ ներկայացված հիմքերը ամբողջական չեն և հարկավոր է ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույց՝ հրապարակման ամսաթվի նշումով:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.01.2021թ.-ին հրապարակվել է պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը, որի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ «Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ա/ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք,

որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, բ/ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանի 05.11.2020թ. թիվ 06/22064 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի մատակարարվել նաև 0.5լ տարողությամբ շշալցված ջուրը, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն նշված չափաբաժնի մասով լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

vi. Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2021թ.-ին թիվ 01.1/26-1/206-2021 գրության, Երևանի քաղաքապետարանը 25.01.2021թ.-ի թիվ 02/25/01-2062 գրությամբ ներկայացրել է պահանջվող փաստաթղթերի փաթեթը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով Պայմանագրի միակողմանի (մասնակի) լուծման վերաբերյալ www.gnumner.am համացանցային կայքում 15.01.2021թ.-ին հրապարակված տեղեկատվությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1301-2021 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքների մատակարարումը պետք է իրականացվեր 2020թ.-ի ընթացքում, ընդ որում ձեռքբերման նախընտրելի ժամկետ է սահմանված եղել Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև չափաբաժիններում նշված ժամկետները:

Պատվիրատուն 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26106 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին վերաբերյալ տեղեկատվությունը և կից հիմքերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունենալու մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.01.2021թ.-ին թիվ 01.1/26-1/206-2021 գրությամբ հայտնել է Երևանի քաղաքապետարանին, որ 29.12.2020թ.-ի թիվ 25/01-25/26106 գրությամբ ներկայացված հիմքերը ամբողջական չեն և հարկավոր է ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը տեղեկագրում հրապարակելու վերաբերյալ ապացույց՝ հրապարակման ամսաթվի նշումով:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 15.01.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և

«Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ի միջև 18.12.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2 ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողի կողմից էականորեն խախտվել է Պայմանագրի մատուցումը՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք և ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետ Ա. Մկրտչյանի 05.11.2020թ. թիվ 06/22064 գրությունը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, չի մատակարարվել նաև 0.5լ տարողությամբ շշալցված ջուրը, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի, մասնակի 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով հրաժարվել է կնքված պայմանագրից:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 13.01.2021թ.-ին թիվ 01.1/26-1/206-2021 գրության, Երևանի քաղաքապետարանը 25.01.2021թ.-ի թիվ 02/25/01-2062 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ, ներկայացրել է պահանջվող փաստաթղթերի փաթեթը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/3-2» ծածկագրով Պայմանագրի միակողմանի (մասնակի) լուծման վերաբերյալ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվությունը:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 15.01.2021թ.-ին՝ պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին ծանուցումը հրապարակելու հիմքով, սակայն Երևանի քաղաքապետարանը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 25.01.2021թ.-ի թիվ 02/25/01-2062 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ

նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» Ա/Ձ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.02.2021թ.-ի թիվ 26/26/1301-2021 գրությամբ «Արտուշ Խաչատրյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/39 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**